

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԻՋԻՆ ԳԱՐԵՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐԻ ԶԳՏՈՒՄՆԵՐՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Նախ քան թի. դարի սկզբի աղմուկների մասին խօսելը, պէտքէ ուշադրութիւն դարձնել աւելի ևս առաջ—այն ժամանակի վրայ, յորում այդ աղմուկները շարժառթող քաղաքականութիւն հիմնադրուեց: Այդ հիմնադրութեան հռչակաւոր հեղինակներն էին Պաշլաուունիներն, որոնք միակ անձինքն էին այդ ժամանակ՝ ճանաչող Հայաստանեայց եկեղեցու ազատամիտ սկզբունքն դէպի ուրիշ քրիստոնեաները, պաշտպանելու իւր գաղափարներն և թողնելու այլ եկեղեցիներին պաշտել իւրեանցը հաւատով: Այդ կաթողիկոսների գործունէութիւնն ամփոփուած է նոյն իսկ իւրեանց նամակներում, որոնք ժողովուած են «Ընդհանրականի»¹ մէջ: Ժողովողն է Ներսէս Լամբրոնացին, որ և բացատրութիւններ է տալիս իւրաքանչիւր թղթի հանգամանաց նկատմամբ, ըստ որում գրչագրաց մէջ գտնուածնք նորա յիշատակարանը. «Այսմ ականատես և ականջաւոր եղեալ նուաստս Ներսէս՝ համանուն որդի նորին տեառն Ներսէսի հայրապետի: Ըստ փափաքման քո՝ իշխան բարեպաշտ և հարազատ եղբայր իմ Հեթում, շարագրեցի համառօտաբար զպատճառս նա-

1. «Թուղթ ընդհանրական, արարեալ Երիցս երանեալ ս. Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալոյ, Ի հայրապետութեան Տ. Տ. Մատթէոսի Ա. Աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց, 1865, Ի Ս. Էջմիածին», Տես, և Գրիգոր Տղայի՝ Նամականի. Վենետիկ, 1865:

մականցն հանդերձ թղթովք: Իսկ զբոլանդակ վարս երանեալ հօրն մերոյ և Ս. կաթողիկոսին տեառն Ներսէսի, եթէ կամիցիս կարգաւորաբար ուսանիլ՝ նախ քան զայս՝ է մեր աշխատասիրաբար տաղաչափական բանիւ գրեալ՝ զոր առեալ ի ձեռս ընթերցիս և մխիթարեսցիս ըստ առակախօս իմաստնոյ՝ եթէ «ի յիշատակ արդարոց՝ խնդան ժողովուրդք» քանզի յայս փափագ միայն զքո բարեպաշտութիւնդ ի մերումս ժամանակի տեսաք վարարկեալ առ ի խնդրել և յուսանել. զոր իմ կամելով ըստ կարգի գրեցի ի փառս Քրիստոսի Աստուծոյ՝ որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Այն անցքերն, որոնք հաստատուած են գլխաւորապէս այդ թղթերի վրայ, բացատրուած կգտնեն ընթերցողք զրուածիս մէջ ¹ մանրամասն յառաջագրուած, սակայն ջանալով այդ բոլորը հետզհետէ լրացնել, մութ կէտերն պարզաբանել՝ հարկ կայ դոցա վրայ առաւել ևս ընդարձակ խօսելու: Արուհետեւ այդ գործերն սկսուեցան Գրիգոր Գ-ի ժամանակ և դորա թուղթը դեռ չէ հրատարակուած, ուստի դնենք այստեղ այդ աղբիւրն, որին պէտքէ հետեւեն և մի քանի ուրիշ նամակներ ի կատարեալ լուսաբանութիւն այդ պատմութեան:

Արդէն ասել եմ, որ Հայոց եկեղեցուն չեն վերաբերում բիւզանդեան տիեզերական կոչուած ժողովները: Մինչև անգամ այն կանոններն, որոնք պատկանում են այս ու այն օտար եկեղեցու ժողովներին, Հայոց համար բնաւ ոյժ չունին, այլ դոցանից օգտուելու համար են հաւաքուած Հայոց կանոնագրքերում: Հայոց եկեղեցու կանոնները զրուել են Հայոց եկեղեցական ժողովներում և եթ, որոնցով և միայն կառավարուել է Հայաստանեայց եկեղեցին գարերի ընթացքում հաւատարմութեամբ: Յոտար ժողովոց կանոններն ևս կարեն երբեմն Հայոց ժողովով զօրութիւն ստանալ, բայց երբէք ոչ առանց այդ վաւերացման: Այդ պարզ երևում է հենց և. դարի Շահապիւլանի ժողովի որոշու-

1. «Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոց պարագայք, պատմական յառաջագրութիւն, Մոսկւա. 1892. էջ 157—226»

մից, որով Նիկիոյ ժողովի կանոնները վաւերացում են՝ վերստին, իսկ մի ուրիշ որ և իցէ ժողով ամենեւին չէ յիշուամ, ըստ որում այդ ժամանակ ուրիշ ժողովոց կանոններ հեղինակութիւն չունէին ¹։ Ահա և այդ որոշումը։

Ժողովականները միաբան ասէին այսպէս, թէ զեղեալ կարգ սրբոյն Գրիգորի և Ներսէսի և Սահակայ և Մաշտոցի, գուք անդէն հաստատեցէք՝ և այլ զլաւն ևս որպէս և ձեր կամքն են, և մեք կամօք և ախորժիւք յանձն առնումք, քանզի կարգք եկեղեցւոյ թուլացան, և մարդիկք յանօրէնութիւն դարձան։

Արդ՝ օրէնք որ յԱստուծոյ եղան՝ հաճոյ են՝ և եկեղեցւոյ նորա շինութիւն, գուք զայն կարգեցէք՝ և մեք հնազանդեմք և հաստատուն պահեմք, և եթէ որ հաստատուն ոչ պահիցէ՝ զկարգս օրինաց, կամ եպիսկոպոս, կամ երէց, կամ ազատ, կամ շինական, պատուհաս կրեցէ, և տուգանս տացէ։

Եւ զայս ասացեալ միաբան քահանայապետիցն, եթէ առաքելական և նիկիական կանոնն հաստատուն կացցեն, և մեք հնազանդեալ եմք։ Բայց որ ինչ պիտոյ է ի լրութիւն ի նոյն կանոնս, և մանաւանդ ի մէջ տանս Թորգոմայ և կողմանց արեւելեացս։ Ապա կարգեցին և եղին այսպէս ² :

Այս պարզ վճիռը բացարձակ սկզբունքն է Հայոց եկեղեցու, որին և համաձայն արտայայտում է Գրիգորի այս թուղթն ևս։ Վերնագրի մէջ չկայ թէ Գրիգոր Գ.ինն է, սակայն ամբողջ բովանդակութիւնը հաստատապէս ճշմարտում է։ Աւասիկ և այդ։

Թագաւորին Հռոմոց Մանուէլի, պատասխանի գրեալ ի Գրիգորէ Կաթողիկոսէ Հայոց, (որ ի Կլայն Հռոմէական ³)։

Քրիստոսիւ պսակեալ առ ի նմանէ զօրացեալ արքայից արքայ, ծիրանածնունդ թագաւոր կարող և բարձր միշտ օգոստոս և

¹ Յարմար առթիւ կաշխատենք Հայոց եկեղեցու ժողովոց կանոնների վրայ խօսել։

² Մանրամասն բանավարութիւնը տես. յիշեալ գրութեանս մէջ երես. 7—49։

³ Ըստ այլ գրչագրի. 2. Ըստ նմին։

ինքնակալ Հռոմոց գրաւորական պատուելի: Հրամանն ինքնակալութեանդ ձերոյ եհաս առ մերս նուաստութիւն, զոր ընկալեալ և ընթերցեալ ջերմագոյն սրտիւ, և աշխատասէր մտօք, ծանեաք զոր ի նմա յամբարեալ կային զանազան հոտոց և համոց որակութիւնք. ըստ նմանութեան Զեր և աշխատասէր թըռչընոյն իմաստաբար ժողովեալ. յորոց մի և առաջին էր ձերգ բարեփառ և անտուածասէր ս. թագաւորութեանդ անկաւորութեան, մեծաւ յաղթութեամբ և կարողութեամբ ի խաղաղութիւն տնօրինել, զառ ի նմա հաւատացեալ աւանդն, ներքոյ և արտաքոյ, առ երևելիս և ընդդէմ՝ աներևութից: Մարմնոյդ յաղթութեամբ և հոգւոյդ արիւթեամբ ընդդէմ. զինելով ներհակացն կենդանութեամբ պահելով, որք ի սուրբ և ի պատուական գլուխդ յօդեալ են անդամք, երկակի տեսալօք ձեօք հանդերձ անեցեալք ի լրումն ճշմարիտ գլխոյն, ընդ որոյ պատիւս և գոհութիւնս ոչ սակաւս ամենատեսառնն և խնամողին զձեզ մատուցաք. և մատուցուք յաւէտ և երկարաձիգ աղօթիւք և պաղատանօք խնդրեսցուք ի Տեսառնէ, և խնդրեմք յարաժամ առաջի աստուածընկալ սրբոցս, որոց սպասաւոր եմս հանդերձ միարանական բազմութեամբս՝ որ ընդ մեզ են եպիսկոպոսօք և վարդապետօք, և խաչակիր ճգնող միանձամբք տալ զձեզ պարագայծ ամօք և խաղաղական կենդանութեամբ յաղթութեամբ հանդերձ մանուիլապարգև և մանուիլածնունդ ծիրանածնունդ սուրբ բարեփառ թագաւորաւ Ալէքսիոսիւ. և բովանդակ մեծապատիւ զարմիւքդ. և աճեցուցանել ի ձեզ ըստ պարարտութեան գովելի և օրհնեալ անդոյդ զբոյսս աստուածային սերմանցն. ուրոի հնձի որայն կենաց և անմահութեան. երեսնաւորն վաթսընաւորն և հարիւրաւորն¹ առ ի լինել հաց կենդանական. կերակրիչ և հաստատիչ յողորդիչ մօաց. և Զուր զովարար առ ի տածումն ծարաւեալ սրտից, որ և աղբերացեալ առատաբուղի ծաւալմամբ և առ մեզ ժամանեալ եհաս. առ տարամերժեալքս և առ հալածեալքս ի սահմանս Եփրատայ և ի խաղացս անօրէն

1. Մատթ. ԺԳ, 8.

ազգին հագարու և ծննդոց աղախնազաւակ և մոլորագնաց մանկանն: Զոր ընկալեալ ի ձեռս հանդերձ գոհութեամբ զանուշահոտ պտուղս համբուրեցաք երկիւղիւ և ի քաղցրութենէ պտղոյս ծանեաք զծառն և զարմատ ծառոյն. մանաւանդ թէ և զգեղեցկատեսիլ և զանուշահոտ ծաղիկն. յորմէ բարբառ լուաք զի ասէր ցմեզ թէ «ես այն եմ որ յարաժամ ընդ ձեզդ էի և այժմ եմ և եղէց յաւիտեանս՝ ոչ այլ և այլ, այլ մի և նոյն, ոչ քաջբայեալ ի հակառակաց, և ոչ աղօտացեալ ժամանակօք, ոչ ջնջեալ իբրև զմելանաւ գծագրեալ ի քարտիսի, և կամ ի տախտակս փայտեղէնս, այլ գրեալ անջինջ մելանաւ մատինն ամենահաստատ, ի տախտակս սրտի և մտաց՝ մարմնեղէնս և հոգեղէն¹, շօշափեցէք, ասէ, և տեսէք, զի ես նոյն եմ², որ և յետ բազում և զանազան ներգործութեանց, զոր եցոյց Տէրն, ի պէտս մերոյ փրկութեան աստուածային և մարդկային, յաւել և զայս ի փառաբանութիւն իւրոյ ժամու, որպէս և յայտնի եղև տեսողացն ի մեծի և աստուածային սքանչելեացն, յորմէ զանգիտեալ հարիւրապետն վկայեաց ասելով, թէ այրս այս Որդի Աստուծոյ է³, այրս այս ասելով զկախեալն ի փայտէն, և Որդի Աստուծոյ՝ գործողն սքանչելեացն, մեռեալ տեսանելով ի վերայ խաչին, և եղեալ ի գերեզմանին՝ զոր ի մերմէս էառ և միաւորեաց ընդ իւրն, իսկ յարուցեալ և ելեալ յանլուծանելի կնքոյն՝ աստուածայնոյն էր զօրութիւն, որ խոնարհեցաւ վասն մերոյ փրկութեան յիւրոյն փառաց, և զմերն վերացուցեալ նստոյց ընդ աջմէ Աստուծոյ, որ և առաքեաց զկանխաւ խոստացեալ աւետիսն Հօր, որ իջեալ հանգեաւ յոգիս տրտմեցելոցն, և զարթոյց զնոսա ի թմրութենէ կենցաղականս քնոյ, յորմէ արբեալք և ծանուցեալք, ծանուցին և արբուցին՝ յորոց պատրաստեալն էր զանմահական բաժակն. և մեծաւ ջանիւ էր կամօք և աշխատութեամբք սփռեցին յընդհանուր տիեզերս զբանն կենաց, և զմի յայսցանէ երկուցս ոչ աղօտացուցին փոքրկութեամբ և ոչ առաւել պատուեցին վասն մեծութեան, ոչ բա-

ժանեցին չարաչար և ոչ միաւորեցին անաստուածաբար, այլ մի ոմն ի նոցանէ ասաց. «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուաք ի մարգարէիցն, որում և ականատեսք իսկ եղաք¹. որ էրն ոչ զմարմնոյն ասաց, այլ զառ ի Հօրէ Բանէն, որ յաղագս Բանին էր լուրն, «իսկ ականատես», ոչ եթէ աստուածութեան ասաց լինել, այլ մարմնոյն յառաւելութիւն և ձեռք մեր շօշափեցին ի վերայ Բանին կենաց, որ և այսու յայտ առնէ՝ զանճառ միաւորութիւն Բանին և մարմնոյն: Զի այս յայտ իսկ է թէ Աստուծոյ Բանն անըմբռնելի է. և երանելիս այս զմարմնոյն անկաւ զլանջօք² միաւորեալ աստուածութեամբն. ուստի պարտիմք միանալ թէ որ ի սմանէ շօշափեցաւ, մարմին էր յատկապէս, իսկ որ մաքրեացն զսա՝ Բանն էր աստուածային միաւորեալ ի մարմնի: Ոչ անգիտանամք և միւս բանին՝ որ ի յաւետարանական գրութիւն յաւելու և ասէ. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած³. և զոր այլուր ի գիմաց Տեառն առ Փիլիսոփոս գրեալ, որ ետես զիս՝ ետես զՀայր⁴: Եւ արդ՝ ոչ եթէ յատուկ զմարմնոյն կերպարան բերէր առ նմանութիւն Հօր և կամ զգեռաբոյս մարմինն՝ որ յԱզամայ և եթ ասէր, իսկ զբանէ և առ Աստուած. այլ զԱստուած Բանն միաւորեալ ի մարմին: Գրէ և յայլում վայրի ի գիմաց մարմնոյն յայտնապէս ասելով. «ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ և ոչ ինչ»⁵. յայտնապէս տայ աստ զանկարութիւն մարմնոյն և զօրինական գործն առ Հայր աստուածութեան: Եւ այսու ի զանազան և յանթիւս Հասանին բանին ձգմունք: Գտանեմք նոյնպէս և բանս աստուածախօսս վիմին Հաւատոյ, և գլխաւորին առաքելոց, գեղեցիկ և աստուածաւայելուչ բանիւք, միաւորելով զմարմինն ընդ բանին, որպէս և երբեմն յետ իջման Հոգւոյն հրապարակախօս լինէր առ դասս հրէիցն: Զայս Նազովրեցի զայր ցուցեալ յԱստուծոյ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ, մատնեալ ի ձեռաց անօրինաց, բւեռեալ ի վայախ սպանէք, զոր Աստուած

1. Ա. Յովհ. Ա. 1. 2. Յովհ. ԺԳ. 25. 3. Յովհ. Ա. 1. 4. Նոյն ԺԴ. 9. 5. Նոյն Ե. 19.

յարոյդ զնա ի մեռելոցն¹։ Ոգի նորա ոչ թողաւ ի գժօխս, և մարմին նորա ոչ ետես զապականութիւն, որում և ամենեքեան վկայեմք։ Արդ եթէ ոչ էր մարմին, ոչ կոչէր զնա այր ի վայտի բեւեռեալ և սպանեալ. եթէ ոչ էր Աստուած միաւորեալ ի մարմնի, ոչ մնայր անապական ի գերեզմանի, և անըմբռնելի ի դժոխոց, և յարուցեալ իշխանաբար։

Զինչ ասացից և զանօթն ընտրութեան, և զփոյն Տարսոնացի Պօղոս, որպէս գրէ առ Հերրայեցիսն² Հոգւոյն ազգմամբ և ասէ. «Ի բազում մասունս օրինակաց խօսեցաւ ընդ հարսն մեր մարգարէիւք. իսկ ընդ մեզ խօսեցաւ Որդովն, որով զյաւիտեանսն արար, որ է լոյս փառացն Հօր և նկարագիր էութեան նորա, սրբութիւն մեղաց մերոց արարեալ նստաւ ընդ աջմէ մեծութեան ի բարձունս»։ Այս յայտ իսկ է, եթէ լոյս փառացն Հօր և նկարագիր էութեան նորա Բանն, միաւորեալ անճառապէս, ընդ առեցելոյն ի կուսէն, արար զսրբութիւն մերոցն յանցանաց, և նոյն առեցելովն նստաւ ընդ աջմէ Հօր, որպէս ետես և վրկայեաց մեծն և արժանաւոր վկայն Ստեփաննոս³։ Յաւելու դարձեալ և առաքելականս բան՝ թէ «փոքր մի խոնարհեալ քան զհրեշտակս՝ տեսանեմք զՅիսուս վասն չարչարանաց մահուն»⁴. և ապա ի վերայ ածէ այլուր. «ունիմք մեք քահանայապետ. անցեալ ընդ յերկինս, զՅիսուս զՈրդի Աստուծոյ»⁵. զոր արժան է մեզ իմանալ թէ ի վերայ միոյն Յիսուսի դնել զխոնարհագոյնն, և զբարձրագոյնն, գրէ դարձեալ զինի. նոյնպէս և Քրիստոս ոչ եթէ անձին շուք եդ լինել քահանայապետ, այլ խօսեցաւ առ նա. թէ. «Որդի իմ ես դու և ես այսօր ծնայ զքեզ»⁶. և թէ «դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեղեկի»⁷. որ յաւուրս մարմնոյ իւրոյ ազօթս և պաղատանս առ այն որ կարօղն էր ապրեցուցանել զնա ուժգին գոչմամբ և արտասաւօր մատուցանէր և լսելի լինէր առ լաւութեան։ «Թէպէտ և Որդի է ուսաւ ի չարչարանաց անդի զհնազանդութիւն»⁸։ Եւ իբրեւ կատա-

1. Գործք. առ. Բ. 32. 2. Ա. 1. 3. Գործք առ. Ե. 55. 4. Եբր. Բ. 6. 5. Անդ. Գ. 14. 6. Եբր. Ե. 5. Սաղմ. Բ. 7. 7. Անդ 6 Թ. 4. 8. Եբր. Ե 8.

րեցաւ եղև ամենայն հնազանդելոց իւրոց պատճառ փրկութեան յաւիտենից, և անուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ, ըստ կարգին Մելքիսեղեկի. և իւրով արեամբն եմուտ ի սրբութիւնսն յաւիտենական և մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ:

Արդ ամենայն առաքելական այս բանք հաստատագոյնս տան մեզ օրինակ մարդեղութեան Բանին Աստուծոյ, և զանճառ միաւորութեան ի մարմին, բայց ոչ իբրև զհաստատանոց կերակուր, այլ ըստ ժամանակին պիտոյից իբր տղայոց կաթն ջամբելով¹: Որ և զտկարագոյնս մարմնոյ և չարչարանացն զկիրս, առաւել ևս զպարծանս համարեցան անձանց և քարոզութեան, որպէս և առէր Պօղոս² ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ խաչին ճառ փրկելոցս նուաւ զօրութիւն աստուածային. որ և այսու ի ցրտաշունչ, և ի դառնաբեր աւուրս ձմերայնոյ սերմանեցին զԲանն կենաց ի կորդացեալ և ի խոպանացեալ բնութիւնս մեր, ըստ բանի մարգարէին, թէ սերմանեցէք զարդարութիւնս և հնձեսցի ձեզ պտուղ կենաց, որ և առատացաւ ոչ այլ ինչ իրօք, բայց միայն շնորհօքն Աստուծոյ, և մեծաջան քրտամբք և արդարագնաց կենցաղաւորութեամբք նոցա զոր և հաստատեցին և արմատացուցին մեծաւ զգուշութեամբ և աշխատութեամբ հետեւողք նոցին ս. հարբն, և յարդարեցին զգթուարինսն ի դիւրինս, և զառապարքն ի հարթ ճանապարհս, հատանելով զկաղճ վնասակար և զորոմն ապականիչ ի բաց խլելով³ յայտնի ցուցանելով զգայլսն ի հանդերձս դառանց, և զգուշացուցանելով զբանաւոր հօտս անմեղաց⁴ որպէս և ի ժամանակս ս. և աստուածասէր թագաւորին Կոստանդիանոսի երեւցոյց սատանայ զկինջն վայրենի, և զարմատն դառնութեան զանիծեալն Արիոս զհամախոհգ արբանեակն իւր, որ հայհոյեաց զամենասուրբ զերրորդութիւն, արարած և յետ ժամանակի ասելով զՈրդի, և օտար ի բնութենէ Հօր:

Յաղագս որոյ և ժողովն սուրբ եղև ի Նիկիա Բիւթանաց-

¹ Ա. Կորնթ. Գ, 2: ² Գաղ. 2, 14: ³ Եսայ. Խ, 4: ⁴ Մատ. Է, 15:

ւոց հրամանօք քրիստոսապսակեալ արքային, որք և արիաբար զինեալք, զչարն բարձին ի միջոյ, հանդերձ վնասակար գաղձիւն իւրով, և հաստատեցին զճճմարիտ հաւատս ուղղափառութեան յընդհանուր տիեզերս: Զոր և մերս եկեղեցի ընկալաւ ի մերոյն Արիստակէսէ սրբոյ, յորս ոչ առաւելաք ինչ և ոչ պակասեցուցաք, այլ կայ և մնայ մինչև ցայսօր ըստ առ ի սրբոց հարցն աւանդեցելոց:

Հաւատամք ի մի Աստուած, Հայր ամենակալ, յերևելեաց և աներևութից արարիչն: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ ծնեալ յԱստուծոյ ի Հօրէ Միածին, այսինքն ի բնութենէ Հօր, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ մշմարտէ ծնեալ և ոչ արարեալ: Նոյն ինքն բնութիւն Հօրն, որով ամենայն եղև յերկնի և ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ վրկութեան, իջեալ մարմնացաւ մարդացաւ, այսինքն ծնաւ կատարելապէս ի մարիամայ սրբոյ կուսէն Հոգւով սրբով, որով մարմին և հոգի և ամենայն որ ինչ է մարդ ճշմարտապէս, և ոչ կարծեօք ունելով. չարչարեալ, այսինքն խաչեալ ի Պոնտացոյ Պիղատոսէ, թաղեալ, և յերրորդ յաւուր յարուցեալ, ելեալ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն լիառօք դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վաղձան: Հաւատամք և ի ս. Հոգին՝ յանեղն և ի կատարեալն որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն և բնակեաց ի սուրբսն:

Յայս ճշմարիտ և պատուական հիման վերայ շինեցաւ եկեղեցիս մեր և հաստատեալ մնաց մինչև ցայսօր ժամանակի, ոչ ունելով արատ, և ոչ սպի՝ ոչ հարեալ ի խղճէ մտաց, ոչ անըզգայացեալ ի հիւանդութեանց ախտ անկանելով:

Գտանին առմեղ և այլ ժողովք քան զմեծադոյն ժողովն Նիկիայ, և չեն ի ծածուկ, այլ յայտնիք, թէ որք և ուստի և յաղագս որոյ պատճառի եկին յայն:

Առաջին, որ և երկրորդ ժողով, որ եղև յԱնկուրիա քաղաք,

մետասան եպիսկոպոսօք, առ ի քակտումն խիկիանոսի ամբարշտութեան, որ ի զոհս կռոցն բռնադատէր զէրիցունսն, որք եղին գլուխս ի:

Երրորդ, ժողովն ի Կեսարիայ եղեալ, յորս գումարեցան ի եպիսկոպոսք, վասն ինչ անօրէնութեանց կանանց, որք և եղին գլուխս յ:

Չորրորդ, ժողովն որ ի Նիոյկեսարիայ եղև վասն պռնկական աղանդոյն, որ թոյլ տային քահանայից վասն պղծութեան գործոյն, յորս եկին առ միմեանս վեշտասան եպիսկոպոսք, և ընդդէմ՝ զինեալք հաստատեցին կանոնս սրբութեան գլուխս ի:

Հինգերորդ, ժողովն եղև ի մեծ եկեղեցին Գանգրացոյ, առ սուրբն Եւսեբիոս, յետ մեծ ժողովոյն Նիկիոյ, ընդդէմ՝ Եւստատիացոց հերձուածոյն, որք ասէին (ըստ) անմտութեանց իւրեանց թէ որք ընդ ամուսնութեամբ են և մեղան, անյոյս են ի վիրկութենէ, և որք զմնակերութիւն պղծ համառէին. բազում և այլ ինչ իրս այլանդակս մոծին յազգս իւրեանց, որք քաջութեամբ ընդդիմակացեալ հնգետասան եպիսկոպոսաց, եղին կանոնս ի. ի լըրումն կանոնաց ս. ժողովոյն:

Վեցերորդ, ժողովն որ եղև յԱնտիօք, որպէս զի յետ բազում ժամանակաց բորբոքեցաւ աղանդն Արտեմոնի, ալլափոխումն տօնից և կարգաց եկեղեցւոյ՝ հաստատելոց ի ս. հարցրն, յորս գումարեալ ընդդէմ՝ նորա չարութեան, ԼԱ եպիսկոպոսաց, և հաստատեալ եղին կանոնս ին:

Եօթերորդ, ժողով որ եղև ի Նաոզիկիայ ընդդէմ՝ աղանդոյն Սատացոյ, որք չորեքտասաներորդքն կոչին, որ ի բազմաց յայլայլութիւն դաւանէին ի լկանս եկեղեցւոյ, որք ի միասին եկեալ ին. եպիսկոպոսք, և մեծաջան աշխատութեամբ բարձին ի միջոյ, և հաստատեցին ընդդէմ՝ նոցա կանոնս Ծն:

Ութերորդ, ժողով որ ի Սարգիկէ, եղև Ոսէոս եպիսկոպոս և Կօզենդիոս, և այլք, որք գեղեցիկ և աստուածահաճոյ բանիւք և կարգօք հաստատեցին զեկեղեցի Աստուծոյ, շինեալ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից և առաջին հարցն սրբոյ, և եղան գլուխս քսան և մէկ:

Իններորդ, ժողով որ ի մեծն Կոստանդնուպոլիս եղև ի ժամանակս ս. և քրիստոսասէր մեծին Թէոփոսի, ի վանումն հոգեմարտին Մակեդոնի, և հաստատումն բարի խոստովանութեամբ ս. ժողովոյն Նիկիայ, յորս ժողովեցան ճշ. եպիսկոպոսք, ընդ որս և մեր մեծն Ներսէս (?) որք եղին գլուխ երեք:

Տասներորդ, ժողովն ի Նիկիա եղև ի մայրաքաղաքն Եփեսոս, ի ժամանակս միւս Թէոփոսին որ փոքրն կոչի, ընդդէպ (sic!) լիշապագլուխ առն անիծելոյն Նեստորի, որ ըստ պատահման ժամուն ունէր զաթոռ հայրապետութեան մեծին Կ. Պօլսի, որ յի ուց բնութեանց շարայարումն մոլորեալ մարգածին և ոչ աստուածածին կոչեաց զճշմարիտ Աստուծոյ մայրն. յաղագս որոյ գումարեալ երկերիւր սրբոցն հարցն արտասահման արարեալ, և ի բաց կտրեցին աստուածային որովն, որք և եղին գլուխ զ. որոց հազորդեալ գրով ձեռին իւրոյ, և մերն Սուրբն Սահակ (??):

Յայս վերոյգրեալ ժողովքս զոր եղաք, և հաստատեցաք մի ըստ միովէ ըստ ժամանակին և յայտարարութեան գործոյն և իրին: Եւ թէ վասն որոյ պատճառի եղեն՝ ի սոյն իսկ հաստատեալ կայ եկեղեցիս Հայոց ուղղափառ դաւանութեամբ. զորս ընդունին ընդունի, և զորս որոշեն որոշէ, և հրաժարէ, որպէս ի խածանող գազանաց:

Ա. Նշովեմք զամենայն հերձուածողսն զչարսն, և զթշնամիսն Աստուծոյ և եկեղեցոյ նորա մանկանց:

Բ. Նշովեմք զԱրիոս, վասն զի ասաց՝ ոչ գոլ զՈրդի ի բնութեանէ Հօր:

Գ. Նշովեմք և զպիղծն Մակեդոն որպէս զի ասաց թէ Հօգին սուրբ նուազագոյն է քան զՀայր և զՈրդի:

Դ. Նշովեմք զՊօղոս Սամոստացի, որ ասաց թէ Յիսուս մարդ էր լոկ, և իմաստութիւն մեծ է քան զՅիսուս:

Ե. Նշովեմք և զՓլաքիանոս, զի ասաց թէ նմանութեամբ և ստուերաւ երևեցաւ Որդին Աստուծոյ յերկրի, և ոչ ստուգապէս մարմին և շունչ առ ի ս. Կուսէն:

Զ. Նշովեմք և զԱպողինար, վասն զի ասաց թէ մարմին միայն առ Տէրն ի ս. Կուսէն, և միտս և շունչ ոչ առ:

Է. Նշովեմբ առաւելապէս և զպիղծն Նեստոր, զի ասաց թէ Մարիամ ոչ ծնաւ Աստուած, այլ մարդ արարած, և տաճար բանին Աստուծոյ:

Ը. Նշովեմբ ընդ նմա և զհամախոհն նորա զԹէոփոր և զԴիոփորոս, և զԻբաս, և զԱկակ, և զԲարայ ի Մծբնայ:

Թ. Նշովեմբ և զՎաղէնտիանոս պիղծ, վասն զի զմարմինն Տեառն յերկնից ասաց բերեալ:

Ժ. Նշովեմբ և զամբարիշտն Եւտիբէս Կիլիկեցի, որ զմարմինն Տեառն առ աչօք ասաց ունել:

Եւ փոխանակ սոցա զարս սուրբս և քրիստոսազգեացս, որք ուղղափառ հաւատոյ ս. հարցն եղեն ձայնակիցք, և հաստատիչք, և յայնր բարի հիման վերայ շինեցին զգեղեցիկ շինուածս տնօրէնութեան Բանին Աստուծոյ: Որոց մի և առաջին ճանաչի Աթանաս Աղեքսանդրացոց եկեղեցւոյն վերատեսուչ և առաջնորդ հոգիւնկալ այր, որ մեծաջան էր կամօք և աշխատութեամբք ընդդէմ զինեալ յամօթ արար զբազում դասս հերձուածողացն, զարիանոսացն ասեմ, և զԵւնոմիանոսացն, զսաբելացոցն և զայլոց յոլովից, որ և ճոխաբան աստուածաբանութեամբ լուսաւորեաց և հաստատեաց զեկեղեցւոյ մանկունս, որպէս և յայտնապէս ծանեալք ի ճշմարիտ հաւատաբանութեան նորա՝ որ ի ս. երրորդութիւն, զի գրէ այսպէս:

«Հաւատամք մի Աստուած Հայր ամենակալ, բոլորիցս արարիչ երևելեաց և աներևութից, որ ունի զգոլն առ յինքենէ, և ի միածին Բանն, ոչ յառաջբերական և ոչ խոհական, ոչ կարօտ գոլով կատարելութեամբ, և ոչ հատումն յանախտ բնութենէն, և ոչ առաջարկութիւն: Այլ Որդի ինքնակատար, կենդանի, ազդող, ճշմարիտ պատկերին Աստուծոյ հաւասարապատիւ և հաւասարափառ, քանզի այս են կամք Հօր, զի պատուեսցեն զՈրդի, որպէս պատուեն զՀայր¹, Աստուած ճշմարիտ՝ Աստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ, որպէս և ասէ ի Կաթուղիկէն Յովհաննէս, եթէ եմք ի ճշմարիտ Որդոյ նորա Յիսուսի

Քրիստոսի. Աստուած ճշմարիտ և կեանք յաւիտենականք, ամենակալ յամենակալէ, վասն զի ամենից իշխէ և ունի Հայր, իշխէ և Ռդի ունի, բովանդակէ նման Հօր, որպէս և ասաց Տէրն. եթէ որ ետես զիս, ետես զՀայր իմ¹. Ճնաւ անճառապէս և անհատաբար քանզի զազգատոհմն նորա ո՞ւր պատմեցէ²։ Փոխանակ ասելոյ թէ ոչ որ ի վաղճան յաւիտեանց իջեալ ի ծոցոյ Հօր յանարատ կուսէն Մարիամայ զմերս ընկալաւ, մարդ Յիսուս Քրիստոս, որ ետ զանձն³ վասն մեր, ի չարչարանոյ մատնեալ իւրով կամօք որպէս ասէ Տէրն. ոչ որ բառնայ զանձն իմ յինէն. իշխանութիւն ունիմ զնել, և իշխանութիւն ունիմ միւսանգամ առնուլ զնա⁴, որով մարդով խաչեալ և մեռեալ, յաղագս մեր յարեաւ ի մեռելոց, վերացաւ յերկինս սկիզբն ճանապարհի ստացեալ մեզ. յերկրի գոլով եցոյց մեզ զլոյս ի խաւարէ. փրկութիւն ի ժողովրդենէ, կեանս ի մեռելոց, զմուտն ի գրախտն յորմէ արտաքսեցաւ Ագամ, յորում դարձեալ եմուտ ի ձեռն աւագակին, որպէս ասաց Տէրն՝ այսօր ընդիս իցես ի գրախտին⁵, յոր և Պօղոսն⁶ եմուտ վերնաճանապարհորդութիւն ի յերկինս, ուր և կարապետն մեր եմուտ տէրութեան մարմին, որով հանդերձեալ է դատել. զկենդանիս և զմեռեալս։

Հաւատամք նոյնգունակ և ի Հոգին Սուրբ որ զամենայն քննէ և զխորս Աստուծոյ⁷, նզովելով զայնոսիկ, որ արտաքոյ այսր աւանդութեանս ինչ խորեցին. և որ ի կարգին է։

Զայսիսի խօսեցեալ բանքս ի Հոգւոյն Սրբոյ տուչութենէ, և որ սոցին նման ընդունիմք և համբուրեմք երկիւղիւ, և հաւատամք և դաւանեմք աներկեան սրտիւ և մտք, և զաստղըն վերնոցն դասակից և աթոռակից կոչեմք։

Ածեմք ի մէջ և զաստուածազգեաց հայրն՝ զսուրբն Գրիգոր Նիւսեայ եկեղեցւոյն վերատեսուչ և հովիւ, թէ որքան բազմապատիկ և զարմանալի բանիւք յարտաքնոցն և ի ներքնոց շարա-

1 Անդ. ԺԳ, 9. 2 Եսայի. ԺԳ, 8. 3 Ա. Տիմ. Բ. 5. 4 Յովհ. Ժ. 18.
5 Դուգ. ԻԳ, 43. 6 Բ. Կորնթ. ԺԲ, 4. 7 Ա. Կորնթ. Բ. 10.

մանէ առիբեարս զճմարիտ մարդեղութիւն բանին Աստուծոյ, և զանշիւթ միաւորելն ի մարմնի, որպէս ասէ յորոց մի իմանամք և զասացեալ բանս զառ մարդկանս միաւորութեան Աստուածն բանի, ըստ որում միաւորեալ մնայ անշիւթ և անսպարազրելի, և ոչ ըստ անձին եղանակի, քանզի նա ի բազմացելոց թուի գալով, և ախտակից, լինելով վասն իւրութեան մարմնոյ, է երբէք զի ըմբռնեալ և ըմբռնիլ, իսկ Աստուածն բան ոչինչ ի կցոր դութեան էառ մարմին, և անձն այլայլեալ, և կամ ընդունակ եղեալ նոցա տկարութեան, այլ հաղորդ ցուցեալ զնոսա իւրոյն աստուածայնութեան, լինի նոքօք մի ծանուցեալ որ ինչ էրն, և նախ քան զմիաւորիլն: Նոր իմն յեղանակս այս միաւորութեան և խառնման, և միաւորի և խառնի յամենայնի ամենեւին անախտագրելի ոչ ախտակից եղեալ, այլ գործակից միայն, ոչ ապականակից կամ այլայլակից, այլ աճեալ նոցա ի միասին: Նա ոչ նուազեալ ի նոցանէ, առ իմանալոյ անփոփոխելի և անշիւթելի, զի մաքրապէս ամենայն այլայլութեան ընդունակ է: Եւ զոր ի կարգին առասացութիւն Պորփիրոսի յաղագս անշիւթ միաւորութեան բանին և մարմնոյն, յիշէ և երանելին և իմաստախոհ Հայրն Գիօնեսիոս, վերին դասակցութեանցն քննիչն յաղագս մարդեղութեան բանին Աստուծոյ, և ասէ այսպէս «ոչ մարդ էր Քրիստոս և ոչ որպէս ոչ մարդ, այլ որպէս ի մարդկանէ մարդ գերազանց, և ի վեր քան զմարդ, և ճմարտապէս մարդ եղեալ, և այնուհետեւ ըստ Աստուծոյ ոչ զաստուածայինսն ներգործեալ, և ոչ զմարդկայինսն ըստ մարդոյ, այլ այրացելոյ Աստուծոյ, նոր իմն և աստուածայրական, ներգործութեամբ ընդ մեզ քաղաքաւարեալ ¹»:

Աճեմք ի մէջ աստանօր զսուրբն Բասիլիոս արքեպիսկոպոս Կեսարու, և յիշեմք զսքանչեւապատում բանս նորա թէ որպէս վայելապէս տայ զօրինակ բանին առ մարմինն միաւորութեան,

¹ Այսպէս է և յունարէնն. Ըստ այսմ պէտք է ուղղել և Խաչիկ Կաթողիկոսի թղթի մէջ բերուած վկայութիւնը. տես Ասողիկ Ս. Պետերբուրգ 1885. էջ. 218.

«զի որպէս երկաթ, ասէ, ընդ հրոյ միաբանեալ ընդունի զհօւրն ոչ փոխիսաբար, այլ փոխատրաբար, զի զբնական որակութիւնսն ի բաց դնելով՝ ի հրոյն փոխի որակութիւնսն, և ոչ զիւրն, այլ զնորայն ներգործէ զօրութիւնս: Իսկ բնութիւն հրոյն ոչ շփութի, և կամ ի բաց դնէ զծայրս որակութեան ի միաւորելն երկաթոյն, այլ զնորայն փոխադրէ յիւրն ունակութիւն ըստ զօրութեան, բնաբար ունելով զանյեղափոխութիւն, թէպէտև ընդ ամենայն գոյս ունի զհաղորդութիւն: Եւ արդ միացեալ ընդ երկաթոյն ոչինչ կրէ ի նորա որակութեանցն, այլ պարզեալ ձգէ ի ծայրս որակութեան ի բոյն բնութեան, զորակութիւնս երկաթոյն ասեմ, զյրօտութիւն և զսևութիւն, լուսափայլ և ջերմին փոխադրեալ, և որ ի կարգին է:

Բերեմք ի մէջ աստանօր և լուսաւորին եկեղեցւոյ զոուրբ և զաստուածաբան վարդապետն Գրիգոր Նազիւանդու եկեղեցւոյն հովիւ և անսուչ, թէ որչափ և քանի տրիաբար ընդդէմ զինեալ չարացն և պառակտողացն զեկեղեցի Աստուծոյ, որոց ընդգիմաբանէ քաջ գործովաբար ի բազում յեղանակս, յաղագս անճառ միաւորութեան Բանին և մարմնոյն և սքանչելի ներգործութեանցն նոցա, որպէս զի ասէ. «Եկեալ Աստուած հանդերձ առեցելովն մի յերկուց ընդգիմակաց մարմնոյ և հոգւոյ, յորոց մինն աստուածացոյց, և մինն աստուածացաւ: Ո՛վ նոր խառնրմանն, ո՛վ սքանչելի խառնուածոյն, որ էրն լինի, և ստացիչն ստացանի, և անտանելին տարեալ լինի, միջոցաւ հոգոյ յաստուածութեան միջնորդելով և մարմնոյ թարձրագունի, ճոխն աղքատանայ, լցեալն թափի, զի ես ճոխացայց և ի նորա լուութենէն աւից»:

Դարձեալ և ի պատեքին ճառ յիշէ այսպէս. «յուովագոյնք են ժամանակիս այսորիկ սքանչելիք, Աստուած խաչեալ, արեգակն խաւարեալ, և դարձեալ լուսաւորեալ, վասն զի պարտ և արժան էր ընդ արարչին չարչարակից լինել և արարածոցս, վարագոյր պատառեալ, արիւն և ջուր ի կողիցն հոսեալ, մին իբրև զմարդոյ և միւսն առաւել քան զմարդոյ, շիթք գուզնաքեայ արեան զաշխարհս ամենայն վերստին ստեղծանէն և լինին իբրև խա-

խաց կաթին ամենայն մարդկան, ի միասին զմեզ կապելով և Ժողովելով: Արդ՝ յորս դիցուք մեք զպատճառս բաժանման, որոց հատուցմանց ակն կալցուք:

Յիշէ՛ դարձեալ նոյն երանելիս և յառաջին ճառն Որդոյ, յաղագս անճառ ներգործութեան Բանին և մարմնոյն, և ասէ այսպէս թէ, «միով գլխով մերձեցո զբարձրագոյնսն յաստուածութիւն և ի վեհագոյն բնութիւն քան զչարչարանս և զմարմին. իսկ զնուաստագոյնսն ի բազմաց գոյեալն, և որ յաղագս քո թափեցաւ և մարմնացաւ ոչինչ վատթարագոյն է ասելն, և մարդացաւ, և ապա մարդացաւ, զի մարմնական աւանդութիւնսն քո և զընդ երկիր քարշեալս ի վայր կործանելովս ուսցիս բարձրագոյն լինել, և ընդմին ի վեր ելանել ընդ աստուածութեան, և մի յերեւելիսդ կայցես մնայցես, այլ ամբարձցիս ընդ իմանալիսն, և ծանիցես զի՞նչ է բնութեան բան, և զի՞նչ օրէնք տընտեսութեան, քանզի որ այժմ ի քէն արհամարհեալ էր երբեմն զի գեր ի վերոյ էր քան զքեզ, որ այժմ մարդս ի բազմաց գոյացեալ եկաց մնաց որ էրն, և որ ինչ ոչն էաւ, իսկ զբանէ էր առանց պատճառի, քանզի ո՞ր է պատճառ Աստուծոյ, այլ և յետոյ լինի յաղագս պատճառին և եթէ էր հնար զքեզ փրկել թշնամանողդ, որովք յաղագս այդորի՛լ արհամարհես զաստուածութիւն, զի զքո թանձրութիւնդ ընկալաւ միջնորդաւ մօօք, և միաւորեցաւ ընդ մարմնի, և եղև մարդ որ ի խոնարհ էր Աստուած, վասն զի խառնեցաւ ընդ աստուածութիւն, և եղև մի վեհագունին յաղթելով, զի եղէց այնքան Աստուած, որքան և նա մարդ. ծնաւ այլ եղև ի կնոջէ, սակայն ի կուսէ, այսոքիկ մարդկայինք, և այնոքիկ աստուածայինք անհայր ատի, և անմայր անդի, բովանդակ այս աստուածութեան:»

Դարձեալ ի նոյն բանէ. «քաղցեաւ այլ կերակրեաց զհաղարս, այլ և հայ է կենդանական և երկնաւոր¹. ծարաւեցաւ, այլ աղակեաց եթէ ոք ծարաւի իյէ եկեսցէ առիս և արբցէ² այլ և աղբէ՛րանալ խոստացաւ հաւատացելոց. վաստակեցաւ, այլ

աշխատելոց և բեռնաւորաց է հանգիստ: Զարչարեցաւ, խոցեցաւ, այլ բժշկեաց զամենայն հիւանդութիւնս և զամենայն ախտըս. ի փայտն վերացաւ, այլ զփայտն կենաց այսրէն դարձուցանէր, այլ և փրկէ զաւաղակն խաչակից իւր, այլ և խաւարեցուցանէ զամենայն լուսաւորս: Քացախ արբ, լեզի եկեր. ո՞ր զջուրն ի գինի փոխեաց, որ դառնութեան ճաշակացն է լուծիչ, որ քաղցրութիւն է և բոլորովին փափագումն: Մատնեաց զանձն, այլ իշխանութիւն ունէր միւսանգամ առնուլ զնա: Մեռանէր՝ սակայն կենագործէր, և լուծանէր մահու զմահ: Թաղեցաւ, այլ յարեաւ. ի դժոխս էջ, այլ ի վեր էած զոգիսն: Այլ ի յերկինս համբարձաւ, այլ եկեսցէ ի վաղձան դատել զկենդանիս և զմեռեալս:

Գտանեմք գարձեալ և յերկրորդ բանն, որ յաղագս Որդոյ ասացեալ այսպէս. «բայց առմեր նուաստութեանս և տկարութեանս Որդոյ զիջանէն կամօք Հօր լեալ առաքումն ասի, քանզի յանարատ բնութենէն առմեր կեանս փոփոխումն ոչ տեղւոյ առնէ Տեառն զշարժումն, այլ ի բարձրութենէ փառացն առմեր նուաստս, զմարմնոյն ցոլցանէ զ'ի վայր ճանապարհ: Արդ՝ էջ, ոչ մերկ բանն, այլ մարմին եղև, ոչ Աստուծոյ կերպարան, այլ ծառայի կերպարան»² և որ զկնի:

Արդ՝ այսքանք և այսպիսի վկայութիւնք հաստատեալ գիտեմք, զի ոչ ի վերայ միոյ բնութեան ասացան, յատուկ, այլ ի վերայ միացելոյ և երկուց, և ներգործութեամբք և կամօք, ներգործէր երբեմն որպէս զԱստուած, և երբեմն իբրև զմարդ. այլ ի պէտքս մերոյ փրկութեան, և փասն առաւել փառաւորութեան բանին թոյլ տալով մարմնոյն՝ և զի լուծցէ զկարծիս պատճառայուղիցն և կամք էին ստուգապէս բանին և մարմնոյն, աստուածայինք և մարդկայինք, բայց այն որ ցանկայր հակառակ հոգւոյ խափանէր զհետ գնալովն աստուածայնոյն:

Յիշեմք աստանօր և զհաւատաբանութիւն Կիւրեղի Աղէքսանդրացւոյ, զի գրէ այսպէս. «Հաւատամք մի Աստուած, Հայր ամենակալ, ամենայն երևելեաց և աներևութից տրարիչ: Եւ ի մի

Տէր Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ, ծնեալ ի Հօրէ Միածին, այսինքն ի բնութենէ Հօր, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ, բնակից Հօր, որով ամենայն եղև յերկինս և յերկրի, որ վասն մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան էջ և մարմնացու և մարդացաւ, մեռաւ և յարեաւ յառուր երրորդի և ել յերկինս, և գայ դատել զկենդանիս և ըզմեռեալս, և ի Հոգին սուրբ: Եւ որք ասենն՝ էր երբեմն զի չէր, և յառաջ քան զնա չէր, և թէ յոչնչէ եղև, կամ յայլմէ զօրութեննէ, կամ ի բնութեննէ, կամ փոփոխելի և այլալելի զՈրդին Աստուծոյ, զայնպիսիսն նշուիէ կաթողիկէ եկեղեցի»:

Նորին գարձեալ. «Թէ որ ոչ խոստովանեսցի թէ Աստուած է ճշմարիտ Եմմանուէն, և վասն այսորիկ աստուածածին զսուրբ կոյսն՝ ծնեալ ըստ մարմնոյ զմարմնացեալ Բանն Աստուած, նշուիեալ եղիցի»:

«Եթէ որ ոչ խոստովանեսցի բնութեամբ միանալ ի մարմնի Բանին Աստուծոյ Հօր, և մի Քրիստոս Հանդերձ մարմնով իւրով զնոյն Աստուած միանգամայն և մարդ, նշուիեալ եղիցի»:

«Եթէ որ զմի Քրիստոսն բաժանեսցէ յերկուս զէմս յեռ միանալոյն, և միայն մերձաւորութիւն յարելութիւն ասիցէ իբրև պատուով, և կամ ճոխութիւն զօրութիւն գտեալ, և ոչ միութիւն բնութեան, նշուիեալ եղիցի»:

«Եթէ որ իշխէ ասել Աստուածազգեաց մարդ զՔրիստոս, և ոչ Աստուած ճշմարիտ իբրև զմի որդի բնութեամբ, որ եղև Բանն մարմին, և Հաւատարեաց մեզ արեամբ և մարմնով, նշուիեալ եղիցի»:

«Եթէ որ ասիցէ Աստուած և Տէր է Քրիստոս որ յԱստուծոյ Հօրէ Բանն, և ոչ զնոյն խոստովանեսցի Աստուած և մարդ միանգամայն ի լինել Բանին մարմին ըստ գրոց, նշուիեալ եղիցի»:

«Եթէ որ ոչ խոստովանեսցի զԲան որ յԱստուծոյ, չարչարեալ մարմնով, և խաչեալ մարմնով, և զմահ ճաշակեալ մարմնով և լեալ անդրանիկ ի մեռելոց, որպէս զԱստուած, նշուիեալ եղիցի»:

Միաբանեմք ընդհոսա և զԲանս մերոյ Լուսաւորչին և ճշմարիտ

խոստովանողին Քրիստոսի Գրիգորի, զոր ասէ յաղագս անճառ Բանին միաւորութեան այսպէս:

«Արդ առաքեաց Աստուած զՈրդին իւր յաշխարհ, որ և եղև ի կնոջէ, և ի մարդկեղէնն մարմին, պատեցաւ մարմնովն իւրով զամենայն մարդիկ կենդանացոյց, որով յաղթեաց արարիչն յաշխարհի, զի նորոգեացէ զարգարսն. և զերծուցէ ի մեղսածին ծննդոյ, հրեշտակակերպս արասցէ, և աստուածորդիս կոչեացէ, և զմահկանացուս անմահացուցէ. բայց ինքն իւրովք կամօքն արար զամենակեցոյց գալուստն իւր, և կատարեաց զկամիւս Հօր, առաքեցաւ, Աստուած յԱստուծոյ սուրբ Հոգի, առ զմարմին ի կուսէն մարդ կատարեալ, կատարեալ աստուածութեամբն, զաստուածութեան զօրութիւն յայտ արար, և զմարմնոյն ակարութիւն ոչ ծածկեաց: Ծառայակից եղև մարմնովն մարդկութեան, և ազատեաց ի մեղաց զմարդկութեան մարմին, հալածեցաւ մարմնով և հալածեաց զսատանայ, և կապեաց ըզմեղս, և որք ի մարմինն հաւատացին ծանոյց նոցա զաստուածութիւն իւր, և որք ի մարմնոյն գթեցին ուրացան զբնութիւն նորայ քանդի միացաւ ի մարմնի բնութեամբ, և խառնեաց զմարմինն ընդ իւր աստուածութիւնն. վասն մեր էջ ի չափաւորութիւն և ամիոփեցաւ ի մարմինն բոլանդակեցաւ ճշմարտութեամբ ի մարմինն և ճշմարիտ մարդ եղև. և էջ յանարգութիւն, զի զմեզ բարձրացուցէ, խոնարհեցաւ և խառնեաց զաստուածութիւնն ընդ մարդկութիւնս, և զանմահն ընդ մահկանացուս, զի զամենայն մարդիկ անքակ արասցէ յանմահութենէ յաստուածութիւն իւր, յորժամ մարմնով նստաւ Հայր ընդ աջմէն եմուտ, և խառնեաց զմեզ յաստուածութիւն իւր, միածին Աստուած Որդին և հզօրակիցն Հօր»¹:

Արդ՝ զայս ամենայն զոր գրեցաք փոքր ի շատէ և ծանուցաք ոչ եթէ իբրև անգիտացելոց ոմանց յայտ արարաք զայս ձերումդ ամենագէտ (!) անձին, այլ զի զմերո ծանիցէք, եթէ

¹ Այս վկայութիւնն մի ամբողջութիւն չէ, այլ զանազան կտորներ են վերցուած Ագաթանգեղոսից և ի մի ձուլուած:

չեմք անտեղեակ աստուածախօս բանից հարցն, և որք ի նոցանէն աւանդեցան ս. եկեղեցւոյ ուղղափառ հաւատոյ դաւանութիւնք, որ ի Հայր և յՈրդի և ի ս. Հոգին. և ի ճշմարիտ մարմնաւորութիւն Բանին և Որդւոյն Աստուծոյ. յոր հաւատամք և խոստովանիմք և ի մահ նորա մկրտիմք աներկեան սրտիւ և քարոզեմք յեկեղեցիս մեր և ընդդէմ ամենայն թրշնամեաց մեծաւրանչ տնօրէնութեան մարդայեւոյն վասն մեր: Եւ յայս ամենայն վերագրեալ ս. հարքս և ճշմարիտ բան սոցա զոր խօսեցաւ՝ բովանդակապէս հաստատեալ կամք ամենայն Հայոց լրութեամբքս, և սրտիւ հաւատամք յարդարութիւն, և բերանով խոստովանիմք ի փրկութիւն անձանց. և զսոյն դաւանութիւն հանդերձեալ եմք տանել աներկբայ սրտիւ առաջի վառաց աթոռոյն Աստուծոյ. և զայս վարդապետեմք և ուսուցանեմք որդոց Սիոնի, և եթէ որ այլապէս խորհի սուրբ և աստուածախոտաբանիւքս այսօրիւկ ջանամք ածել յուղղութիւն. իսկ զապառաժացեալն սրտիւ ի բաց վարեմք քարկոծմամբ իբրեւ զգաղանային և զանարժանս լրոյ հոգիախօս պատգամացս, ոչ տալով զսրբութիւն շանց, և ոչ զպատուական մարգարիտս արկանել առաջի տղմասէր խողից ¹: Եւ թէ որ նորագոյն և արտաքոյ այսօրիկ աւետարանեսցէ մեզ առաւելապէս ինչ թէ և ի հրեշտակացն դասուցն իցէ՝ ոչ ընդունիմք ², այլ կամք մնամք հաստատուն շինեալք յայլս աստուածային հիման ի վերայ, որոյ գլուխ անկեան Տէր մեր եղև, հաստատեաց առաքելօք, և ամրացոյց սուրբ և աստուածասէր վարդապետօք, և շինեմք ոչ խոտ և եղեգն հրոյ ճարագ, այլ արծաթ մաքուր ընդ ոսկւոյ սրբոյ շարամանեալ, և պատուակսն ակամք ընդելուզեալ, և այսու հանդերձ ձայնակից և երգակից եմք ձեզ, և ամենայն ուղղափառ ազգաց քրիստոնէից: Զի ի Քրիստոս Յիսուս չիք խտիր, ասաց Պօղոս ³, ոչ հրեա և ոչ հեթանոս ոչ յոյն և ոչ արմին, այլ ամենեքեան մի եմք ի Քրիստոս Յիսուս, զորոյ կա-

1. Մատթ. Է, 6: 2. Գաղ. Ա, 8: 3. Գաղ. Գ, 27:

տարելութիւն իրացդ ունի տեղեկանալ ս. թագաւորութիւնդ ձեր, և ի հնագիր հաւատաբան գրոյդ, զոր գրեաց ոմն ի մերոց հարցն Յովհաննէս անուոն՝ վերատեսուչ և առաջնորդ տանս Հայոց, եղեալ արժանաւորութեամբ ըստ բերան աւուրցն և պատերազմէր ընդ ոմն մեր, ասէր տգէտ և աղանդաւոր, և յաղթեալ աստուածայնովք բանիւք, որպէս և այլ սուրբք ընդ իւրեանց պատահեալսն, յորոց չեմք տեղեակք, զոր աղաչեմք ճշգրտիւ ի հաւատարիմ թարգմանչէ հասու լինել ամենայնին առանց թերութեան և այդ ի տեղեկանալ զմերս ճշմարիտ համարձակութիւն ուղղափառ հաւատոյ:

Իսկ յաղագս մետասաններորդ ժողովոյն, որ եղև ի ժամանակս Վաղենդիանոսի և Մարկիանոսի ի Քաղկեդոն քաղաքի, ի մերոց ոմանց չունիմք աստ ինչ գնել բանս ոչ բարի և ոչ չար, վասն զի ոչ գոյին անդ, այլ զոր ի ձերոց սրբոց արանց և ի գրելոց նոցա հասու եղաք, յայտնի առնեմք, որ և ձեզ չէ անտեղեակ բազմավէպ գրեալսն Պետրոս Աղեքսանդրացւոյ, որ և աստուածատես և աստուածախօս կոչեաց զանձն իւր, առ Ակակ Կ. Պոլսի, և յետ բազում աւուրց զնորոյն զղջմամբ դարձ, և իբրև ի մեծագոյն մեղանաց և յանհաստատութենէ, զոր և գրով ձեռին իւրոյ տայ զվկայութիւն և յայտնի առնէ ասելով թէ՝ «բանդի որպէս Պետրոս զՍիմոն Մոգ աղօթիւք ջնջեալ կործանեաց, նոյնպէս դու ո՞վ հայր, աղօթիւք և արտասուօք գոչեցեր առ Աստուած վասն մեր և ջնջեցեր զլէւոյն և զտօմարն, զոր եհան ամբարիշտ բերանովն, զոր նզովեցին հարքն մեր»: Վկայ սոցին գրելոցս և գիր հաւատաբանութեան թագաւորին Զենոնի, զոր գրեաց ընդհանուր կողմանս իւրոյ տէրութեան թէ որպէս ի բաց հերքէ զամենայն օտարոտի բանս, և հաստատէ միայն զուղղափառ հաւատս սուրբ և տիեզերական ժողովոյն Նիկիայ, Կ. Պոլսի և Եփեսոսի, որ և բովանդակ բանք թղթոյն առ ի ձէնջ ոչ է ծածկեալ, գտանեմք համաձայն սոցա և զերկրորդ ժողովն Անտիւքացւոց, որք յետ հաստատելոյ զճշմարիտ և զուղղափառ հաւատս ս. ժողովոյն, և նզովելոյ զամենայն գաոս հերձուածողացն, յաւելուն ընդ նոսա և զԼեոն և

զտումարն իւր, «իստն զի ասաց, ասեն, երկու բնութիւնս և երկուս դէմն ի Քրիստոս յետ միաւորութեան»։ Որք սահմանեցին և եղին կանոնս հաւատոյ գլուխ է։ Լուաք դարձեալ եթէ ժողովն և Լեոն Հռոմայեցի ընդդէմ Նեստորի* Եւտիքի ասացին զերկուս բնութիւնսն անջատմամբ և բաժանմամբ, որ թէ այսպէս իցէ, ասեմք եթէ ոչ իբրև զիմաստունս խորհեցան և ասացին չարեաւ զչար բժշկել, և զ'ի յերկուցն միաւորեալն Աստուած չարաչար բաժանեալ, առ որս ասելի է թէ նոցայն չարախոջ միութիւն ոչ աղօտացաւ ի ճշմարտահայեաց սրբոց արանցն տեսութեանց որ առ նոքօք, զոր յայտնապէս հրատարակեցին և նշովեցին ամենայն ուղղափառ սուրբք։ Իսկ ի ճշմարիտ միաւորութենէ Բանին և մարմնոյն ոչ պարտին հեռանալ ամենայն ուղղափառաց դասք, անջատմամբ և բաժանմամբ։ Ձի արարիչն ամենայն էիցս յերկուց բնութեանց ետեղծ զմարդն՝ ի հոգւոյ բանականէ և ի մարմնոյ բարձրագունէ, երկնային և երկրային, ժամանակեայ և անմահ, մեծութիւն և խոնարհութիւն և մի ինչ բովանդակեալ, հակառակ իրերաց, ըստ Պօղոսի, է մարմին ցանկայ և կամի հակառակ հոգւոյ ։

Արդ եթէ զերկուս զայսոսիկ զնեմք մի բնութիւն ընդդէմ աստուածային բնութեան, կարծեմ եթէ յերիս ածէ զմեզ այս շարայարմունս բնութեանց։ Իսկ եթէ ասեմք եթէ հոգին, աստուածային էր բնութեամբ և ի յիւրն շարայարեցաւ իսկութիւն, և ապականակիր մարմին միայն եկաց յատուկ, ընդդէմ աստուածային բնութեան, ապա մեռելոյ ուրեմն և ապականելոյ եղև ընթացակից, և հաղորդ՝ Աստուծոյ Բանն. քաւ լիցի։ Իսկ եթէ եղև հնար միաւորել անմարմին էութեան ընդ մարմնոյ որոց է հոգին՝ և լինել մի բնութիւն կենդանի, հաղորդ և ընթացակից աստուածային բնութեան, հասոտաւալ գիտեմք, թէ և ամենայն եղև հնար միանալ առ միմեանս, մարդոյն հոգով բանականաւ և մոօք, և աստուծոյն այն որ հնար իցէ լուծիչ, որպէս և Յրիգոր աստուածաբանն ասէ, եթէ անտանե-

* Թուի յաւելուած լինել 1. Գաղ. Ե. 17.

լին տարեալ լինի միջոցաւ հոգւոյ, աստուածութեան միջնորդելոյ, և մարմնոյ թանձրագունի, զոր և հաստատէ դարձեալ և ի պատեքին ճառի, կատարեալ ասելով զՔրիստոս, «ոչ աստուածութեամբն միայն, քան զոր ոչինչ է կատարելագոյն, այլ և յաղագս առեցելոյ մարմնոյն և օծելոյ աստուածութեամբն, և եղելոյ որպէս զոր է օծն, և համարձակիմ ասել զուգ Աստուած»:

Արդ զայսոսիկ մեք լուաք ոչ ի մերոց այլ ի ձերոց, որպէս և գրեցաք առ որս ոչ հակառակեմք ստութեան և ոչ ընդդիմանամք ճշմարտութեան, այլ և ոչ կարծեօք վարիմք թէ նորաձևս ինչ խոտորեցան և ասացին և գրեցին քան զոր ի սրբոց հարցն, և ի հետևողաց նոցա լուան և ծանեան, և կամ թէ յայլ նորագոյն հիման վերայ ջանացին շինել զեկեղեցի Աստուծոյ, զոր թէ այդ այդպէս էր, կարծեմ թէ և ձեր աստուածսիրութիւնդ համաձայն նոցա ոչ գտանէր: Զոր և մեք թէպէտև լուաք յոմանց բանակռուաց, բայց ոչ հաւատացաք այնպիսեաց յոգնախումբ գումարելոց աստուածասէր արանց, նորագոյնս ինչ խորհել, և թիւրել զճշմարտութեան պողոտայ: Այլ որպէս և գրեցէքն, ո՞վ աստուածասէր թագաւոր, բարեաց դիւին է զայս արկուածս չարութեան ի մեջ ուղղափառ հաւատացելոց արկեալ, զի զանդամս ճշմարիտ գլխոյն յօշեալ և բաժանեալ բարձցէ ըզճշմարիտ խաղաղութիւն ի միջոյ, որպէս և տեսաք աչօք, և կրեցաք անձամբ, որոյ կարողութիւն հատման և ի բաց բարձման ոչ այլ ումեք գոյ, բայց միայն ճշմարիտ Աղոյժնին, և խաղաղութեան թագաւորին Էմմանուէլի և անուանակցիդ նորա, որ զնորայն ընուս զհափ խոնարհութեան յանձնդ քրիստոսասէր, և զամենայն գործս առաքինութեան մարմնաւոր, և որ նորայն են մեծութիւնք երկրորդ համարիք առ այս աստուածային գործ, որպէս և գրեցէքն, և որպէս ի հնումն առանց հեղման արեան ջրինէր թողութիւն մեղաց 4: Նոյնպէս և Քրիստոս իւրով արեամբն եմուտ ի սրբութիւնսն, ոչ վասն իւր, զի անկարօտ էր բնութեամբ, այլ զի զմերն եգիտ փրկութիւն: Նոյնպէս և դուք պարտիք ա-

րեամբ չափ պատերազմել ընդդէմ չարին, և գտանել զայս ճշմարիտ խաղաղութիւն, որ է բազմաց ոգւոց պատճառք փրկութեան յաղագս հնացեալ ռիսակալութեան, ըստ առ ի ձենջ վկայական գրոյն, և վասն զի սիրոյն բնութիւն ծանր է և հակամիտ, յայտանտի իսկ է, զի ոչ ի ներքուստ ի վեր ընթացաւ, այլ հարկ արար վերնոյն և անխոնարհելոյն խոնարհել. և իւր առնել զգինսն, և զփրկեալն, զփառսն զպատիւն և զմեծութիւն: Նոյնպէս և դուք պարտիք փոխանակ ընդ ամենայնի և զանձն ևս դնել, և զհամամայր որդիքս ի միմեանց բաժանեալ չարին և օտարացեալ ժամանակօք և հեռաւորութեամբ, դարձեալ վերստին ի մի ածել սիրով և համբուրիւ, և մեօք հանդերձ արժանի լինել փառաւորել զամենասուրբ զերրորդութիւն այժմ և . . . :

(Շարունակելի):

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ